ԱԱՆ-ի վարչակարգի փոփոխությունը գործնականում հանգեցրեց Իրայելի ռազմական օգնության դադարեցմանը, ԱԱՆ-ի 6-րդ նավատորմը եւ բաշխեց դեմքի Միջեւրականի կենտրոնական ցրջանները: Այդ դայմաններում դատե- րազմն սկսեց ձգձգվել, թեն իրայելական տանկային գումարտակները չեն ա- կան ռազմական փորձ ունեցող ռուսական ծագումով սղաների հրամանատա- րությամբ դեռ ի վիճակի էին գեղեցիկ հաղթանակներ նվաճել:

Գործնականում առաջատար համաշխարհային տերությունների օժանդակության բացակայությունը (ճակատագրի հեգնանք. այդ ամիսներին Ռուսաստանն է նիշյն Խորայելի կողմից ճակատամարտում՝ ուղարկելով հումանիտար օգնություն, ռազմական տեխնիկա, կամավորներ) Խորայելի սնտեսությունն արագորեն կանգնեցնում է արհավիրքի առջև: «Եվրոպական Երկիր ոչ եվրոպական շրջապատում» ծրագիրը չափազանց ծախսարար է նույնիսկ հարուստ հետական սփյուռքի համար: Բացի դրանց, ուղղափառ հրեայի տեսակետից «Երուսաղեմի կործանումը» նշանակում էր «Խորայելի կործանում»:

2009 թվականի աշնանը Պետսկամում սկսում է Մերձավոր Արևելի ետաժատերազմյան վերակառուցմանը նվիրված խաղաղ համաժողովը: Խորայելը մնում է համաշխարհային բարյարկան բարեզգի վրա, բայց հսկայական ներքաղաքական գիշումների գնով: Սկսվում է «Խորայելսկան վերակառուցումը», որն ընթանում է ԽՍՀՄ-ի և Յարավ-Աֆրիկյան Յանրադետության «դասկերով և նմանությամբ»: Շեշտակի մեծանում է բնակչության արտագաղթը Խորայելից:

Հավելված 3

2008 թվականի ճգնաժամը աշխարհում

(Թ. Ռեդֆորդի «Աշխարհն առանց ԱՄՆ-ի»¹⁹ գրից)

«2008 թվականի ընտրությունները ԱՄՆ-ի սահմաններից դուրս որևէ հետարքություն չառաջացրին: Դեռուսակերպաններին ու համակարգիչների մոնիթորներին զամփած՝ աշխարհը հետևում էր Մերձավոր Արևելի և Ուսւասանի իրադարձություններին: Աշխարհի՝ ռազմական և սննդական տեսակետից ուժեղագույն տերությունն անուշադրության էր մատնվել: Մեկ էլ հանկարծ դարձվեց, որ մեզանից ոչինչ կախված չէ:»

«Ժողովրդական կամմի արտահայտումից» ամճիշտես հետո, որն աշխարհում բարձրագույն իշխանությունը հանձնեց ժողովրդավարների թեկնածուին, «Քոնսթրայքըն» հյուրանոցում (Սան-Ֆրանցիսկո) հավաքվեցին մի շարք ամերիկյան «Think Tank»-երի առաջատար վելլուծաբաններ: Հավաքվեցին, որդեսզի բննարկեն այն ողբերգական վիճակը, որում «Բուօնի դարաւորանից» հետո հայսնվել է դետությունը:

Եթե Աֆղանստանի և Իրաքի կամոյանիաները դեռևս կարելի էր հաղթական համարել (թեև սննդական տեսակետից այդ դատերազմները ոչ մի բնադրատության չին դիմանում), առաջ արդեն Իրանի իրադարձությունները ցուցադրեցին Բուօնի ռազմական դոկտրինայի բացարձակ ձախողությունը: Կեյլով արյունայի դարտություն՝ (թափրած դաշտնական ռազմական զեկուցագրերով և «փաթեթավորված» ետապերազմական աշխարհակառուցման գեղեցիկ կավճաղայի կազմով), Պենտագոնը շիանարձակվեց ուժերի լիածավալ կիրառման զնալ Թուրքիայում: Արդյունքում՝ Թուրքիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի կազմից, ընդ որում՝ այդ իրադարձությամբ Գերմանիան հստակ դիրքավորվեց որդես Միացյալ Նահանգների մրցակից և հակառակորդ:

Հաջորդ ամիսներին մեր ազդեցությունը եվրոպական իրադարձությունների վրա շարունակում էր կրծասվել, իրավիճակը վարժարացավ նաև Մերձավոր Արևելիում: Սենք կանխատեսեցին այդ տաճաշաւորանում ընտրություններին և վարչակազի փոփոխությամբ հավասարեցված խուռագույն իրադարձություններ, սակայն ոչ ոք, իհարկե, ենթադրել չեր կարող այսդիսի մակարդակի հումանիտար աղետ:

Զգալիորեն վարժարացավ ֆինանսական իրավիճակը: 2008 թվականին դրույն արդեն դարձել էր երկրորդ հանահսարհային արժույթը: Կանխատեսումները «դիմարի գոտու» ստեղծման մասին, որում գործում է շարիաթի բանկային իրավունքը, կարող էր դառնալ մահացու հարված դեմի Վոլլ-սթրիթ ուղղված ֆինանսական հոսթերի համակարգին:

«Քոնսթրայքըն» հյուրանոցում հավաքված մասնագետների սկզբանական աշխատությունն ուղղված էր Եվրոպայի և Մերձավոր Արևելի գործերում ԱՄՆ-ի ռազմական և բաղադրական միջանության նոր՝ գործնական ծևերի որոնմանը: Մի ամբողջ շարք ծախսարար առաջարկությունների նկատմամբ շեւակի դիստնասով հնչեց ԱՄՆ-ի Դաշնային դահուսային հանկարգի ղեկավարի ելույթը: Երկիր առաջատար ֆինանսական վելլուծաբանը հայսնեց, որ ԱՄՆ-ը, աշխատամիտ արտադրականության մեջ տանու տարկ ճաղոնիային և մի շարք

¹⁹ Թ. Ռեդֆորդ, «Աշխարհն առանց ԱՄՆ-ի», Սյու-Յորֆ, 2024 (T.Redford "Without USA" NY, 2024)

Եվրոպական Երկրների, կատիւալի արտադրողականությամբ զիջելով Հարավ-արևելյան Ասիայի Երկրներին և անգամ Ուսւաստանին, անընդիհաս մեծացնելով բյուջետային դեֆիցիտը, «կարող է հայտնվել այնդիսի վիճակում, եթք անկարող կլինի դահլիճամել իր եւկից ոչ միայն համաշխարհային, այլև ամերիկյան մայցամաժի ուղարկություն»:

Ասել, թե այդ հայտարարությունը դայթող ռումբի ազդեցություն թողեց, ճիշտ չէր լինի: Ներկաներն իրականում դարձաղեն զգացին նահվան սառցային ընչառությունը:

«Ուենդ-Քորփորեյսին» փորձագետներն ուսադրություն դարձրին, որ ԱՄՆ-ը ծանրաբեռնված է Երկրագնդի արքեր մասերում տանձնած դարտավորություններով, ճիշտ այնդես, ինչորու Սեծ Քրիստոնիան 1939 թվականին: «Ինչդեռ որ Քրիստոնիան այն ժամանակ, մենք հիմա վասնում ենք մեր կատիւալը՝ փորձելով միաժամանակ հասնել բազմաթիվ նորաւակների, որոնց մեծամասնությունն ընդհանրացեն Ամերիկային դեմք չէ»:

Զափազանցություն կլիներ ասելու, որ հենց այդ խորհրդակցությանը դրվեցին այն բամի հիմքերը, որը հետազայտ կանվանվի «2008 թվականի որկտինա», և որը թույլ սվեց Միացյալ Նահանգներին դահլիճնել համաշխարհային առաջնորդի դիրք՝ նվազագույնը մեկ սերնդի համար: Բայց հենց այդ խորհրդակցությանը, համենայն դեպու, մշակվեցին այն Երկու հիմնարար հայեցակարգեր, որոնք դարձան այդ դոկտրինայի հիմնարարեր՝ դոլարի արժեգրկություն և Եվրոպային, Ասիային, Աֆրիկային իրենց սեփական ճակատագրերը հանձնելու: «Աշխարհին դուր չի՞ զայի Ամերիկայի հսկողության ներք աղրելը: Թո՛ղ աղրի նա մի իիշ է առանց Ամերիկայի»:

ԱՄՆ-ը Կոնգրեսի բացաձակ հավանությամբ չմասնակցեց 2009 թվականի Սերձավորական դատեազմին: Այդ տարվա ընթացքում իրականցվեց ամերիկյան զորքերի տարհանումը Աֆղանստանից, Իրանից, Իրաքից, Վրաստանից, Լեհաստանից, Լատվիայից, Շեցսակի կրծավուց ռազմական հենակետերի բանակը Եվրոպայում և Ճեռավոր Արևելում: Երկրի ծախսերը կտրուկ կրծավեցին, 2009 և 2010 թվականի բյուջեները դրոֆիցիսային եղան: Այդ կառակցությամբ Կուալա-Լումպուրի սեղմանքերյան համաժողովը, որը նախազգեց «դիմարային գոտին», դոլարին ավելի թույլ հարված հասցեց, բան ենթադրվում էր, թենի ամբողջ 2009 թվականի ընթացքում NASDAQ և Dow-Jones գործակիցները դանդաղ նվազում էին:

«Դիմարային գոտու» ստեղծմանն ի դատասխան, ԱՄՆ-ը դադարեցրեց ԱՐԿ-ում իր անդամությունը:

2010 թվականի հունվարին ԱՄՆ-ը Նախագահը հայտարեց դոլարի արժեգրկման մասին: Թերևս դա վատազույն ամանորյա նվերն էր, որը երբէ սացել էին ամերիկացիները, բայց ամերիկյան սնտեսությունը ամեն դեղուու դարձավ, վերջաղեն, մրցակցային, և արտահանումը շեցսակի աճեց:

ԱՄՆ-ի սնտեսության առողջացումը հաստատվեց 2010 թվականի մայիսին՝ Մոնթեալի համաժողովին, ուր հայտարարվեց, որ Արևմտյան Երկրագումը 2011 թվականի հունվարի 1-ից դառնում է «բացառադես դոլարի գոտի»:

Սորենալի համաժողովը լուրջ փոփոխություններ առաջացրեց աժսարի սնտեսական բարեփակության: Նախ և առաջ՝ ՆԱՖՏԱ-ն և ՍԵՐԵՑՈՒՍՈՐ-ը համաձայնեցրին իրենց իրավական և վարչական նորմերը, որն ինտերման նոր մակարդակի հնարավորություն ստեղծեց: 2010 թվականի մայիսին ստեղծվեց ամերիկյան

մայրանակի միավորնան սնտեսական հիմք՝ ԱֆթԱ-ն, և մշակվեցին «ամերիկյան առևտուրային իրավունքի» հիմնադրույթները:

Դեռագա տարիները հաստեցին այդուհիս սնտեսական բաղադրականության ճիշ լինելը: Միացյալ Նահանգներն առողջացրեց իր սնտեսությունը Եվրոպայում մի շարք դիրքեր և Ասիայում իրենց բոլոր դիրքերը գործնականում կորցնելու զնով: Սակայն, նրանք իրաժարվելով համաշխարհային առաջատարի դիրքից, դահլյաննեցին և ամրապնդեցին այդ առաջնորդությունը: 2010-ական թվականների երկրորդ կեսին ԱՄՆ-ի ազդեցությունը համաշխարհային իրադարձությունների վրա նույնիսկ ավելի ուժեղացավ, քան երբևէ եղել էր:

«Արդարակի ճողովակը», Բարպայան Սոֆյա, 9s.



«Մոլորակ», Բարպայան Սոֆյա, 8s.



Նիգոյան Ռազմիկ, 10s.



«Քաղաք», Ռազմիկ Նիգոյան, 10s



«Ին զգացմումը. սիրո թշումներ», աղյուսակ Սապտեմբերի, 10s.



«Քաղաք», Խամոյան Լին, 5s.



«Ես միաբարում», Կամենյան Չափոր, 14s.



«Ժամանակ», Բարյան Արդիկ, 10s.




Խաչատրյան Շողիկ, 10s.



Ծառուլյան Կարեն, 9s.



«Ընդ մոլորակ», Յովհաննեսյան Հայկ, 9s.



«Ընդ սճատան», Խաչատրյան Շողիկ, 10s.





Աղաջանյան Արմեն, 8Տ.

«Ես աղագայում», Դազարյան Լիլիթ, 12s.



Հեղինակ՝ Տոնի Յելիշին
Թարգմանությունը՝ Լիլիթ Մկրչյանի



Ծ² Ú² ê̄² ÜÀ[°] ı[°]
° ı[°] Ծ² ØÆà iÀ Úà iÜÀ.
ı[°] Ծ², 2 ԾÒ ı à iÜ

Այս աշխատության մեջ բննության է առնվում մի դարձ հարց. Հայաստանի Հանրապետությունը արդյոք դե՛ս է ձգտ անդամակցել Եվրամիությանը:

Այդ ելակետային դրույթից բխում են մի քանի հանակազմ հարցեր, թե ինչո՞ւ է Հայաստանը հետամտում իր սնտեսական, արտաքին բաղադրականության և ներքին սոցիալական նորականացմանը: Ըստ եռթյան, Եվրոպայի մասին որոշումը, այդուհանդերձ, վերաբերունքի հարց է: Հայաստանը ինչո՞ւ է տեսնում իրեն աշխարհում: Որտե՞ղ են նրա աշխարհաբաղադրական, դասմական և մօսակութային արմատները: Որտե՞ղ նա կցանկանար լինել 2020 թվականին:

Որևէ հասարակության համար դժվար է խորհել հեռավոր աղաքայի մասին, եթե նա դեռևս չի ծերբազավել կործանված կայսրության ավերակների վրա անկախ դեմություն կառուցելու դայարի տառապանթերից: Որմեսզի մարդիկ ժամանակ ունենան մտածելու վաղվա մասին, այսօր, հենց հիմա լուծման կարու չափից ավելի մեծ թվով ընտանեկան կարսու հիմնախնդիրներ կան: Օրական հաց վաստակելը, երեխայի կրթության մասին հոգալը և առողջապահական խնամքի համար միջոցներ հայրաբեկը՝ սրամ բոլոր Հայաստանի բնակչության մեծամասնությանը նախորդ, իրական և առօյյա լուծում դահանջող հարցեր են: Համաշխարհային քանի մոտավոր գնահատականով՝ մինչ բնակչության կեսն աղբում է աղբատության սահմանագծից ցածր դայմաներում՝ օրական 1 ԱՄՆ դոլարից դական եկամտով, անհերթ է թվու նույնիսկ հարց բարձրացնելը այն բաղադրական միության անդամակցելու մասին, որի անդամ դեմություններում մեկ ընչին քաժին ընկնող միջին տարեկան եկամուտը 20000 դոլար է: Կարծես թե այս երկու բաղադրակրթությունները տարբե մոլորակներից են:

Մինչեւ հենց նրանք, ովքեր կարող են ծևավորել, կերտել և իրականացնել երկրի բաղադրականությունը, դարտավոր են խորհել նաև հեռավոր աղաքայի մասին և մօսակել ներկայի իրողություններից դեմի աղաքայի գերադասելի իրողություններ տանող ծագքեր:

Հայաստանի բնակչության անմիջական հոգսերին վերաբերող խնդիրները, նույնո՞ւս, այս առումներով կարգված են երկրի զարգացման աղաքայի ուղղության ընտրության հետ: Անցյալ տասնամյակում Հայաստանից զանգվածային արտագաղթը, որը որոշ մոտավոր հաշվարկերով կազմում է բնակչության ընդհույղ մինչև մեկ երրորդը կամ մեկ միլիոն մարդ, հիմնականում դաշճառաբանված է եղել կյանքի երես այս երկրում բարելավված տեսնելու հուսափությամբ: Հայաստանում կյանքի բարելավվելու նյութակով սոցիալական և գործարար գաղափարներ զարգացնելու փոխարեն՝ ընորհալի անձինք ծառայեցին Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և տարբեր Եվրոպական երկրների բարգավաճմանը, բանգի արտագաղթողները նաև իրենց հնտություններով ու եռանդով հանալրեցին այդ սնտեսությունները:

Հայաստան վերադառնալու համար այս մարդկանց հիմներ են դեմք, ճիշտ այնուևս, ինչո՞ւ նրանց ովքեր մնում են Հայաստանում, երկրից հեռացողների օրինակին չհետևելու համար հիմներ են անհրաժեշտություն: Հայաստանի ներկա համընդհանուր աղբատության իրավիճակին հասցրած դարւուրածն անկումը (արտագործի դաշճառ դարձած սնտեսական բայցայում, որը երկրից հրում է դեմի ավելի խորը սնտեսական անկում) եւ շրջելու համար դահանջվում է հասարակությանը ներգրավել ավելի լավ աղաքայի ոգեշնչող տեսության մեջ, այնոիսի աղաքայի, որը մարդիկ կիամատեն իրատեսական և կյարողանան օգնել որա կառուցմանը:

Այստեղից հետևում է, որ հայերը չեն կարող միայն մտահոգվել տեղական զարգացման հարցերով և հետաձգել ավելի խոռոշ հարցերի լուծումը մինչև նյութական հաջողության որոշակի մակարդակ ձեռք բերելը: Աղաքայի ծագման հետ զուգընթաց դեմք է մտածել առօյս գոյաւանան խնդիրների մասին, եթե վերջինս ժամանակի ընթացքում դեմք է ավելի ոյլուրին դառնա: Այս գործընթացը բոլոր հայերին հնարավորություն է տալիս ընդլայնել իրենց մտահորհզոնն ու վերահսկման ավելի մեծ զգացում ձեռք բերել սեփական ճակատագրի նկատմամբ:

Վերադառնան վերուարադրյալ հարցերին: Հայաստանը ինչողիսի՞ն է տեսնում իրեն աշխարհում: Եվրոպայի հետ միավորումը ենթադրում է, որ Հայաստանը ունի Եվրոպայի հետ սերտ կապի այնոհիս զգացում, որ իրենց Եվրոպան է համարատասախանում Հայաստանի կերպարին ու խառնվածին և ոչ թե ուրիշ աշխարհաբարդարական ինքնություն: Դաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը Իրաստոնեական և մոլուլմանական աշխարհների միջև Եվրոպայի և Ասիայի խաչմերուկների համան կետում՝ Հայաստանի կողմնորոշման հարցը արդեն վարդուց ի վեր վիճակվիւմ է: Արդյո՞ք նա Ասիա՞ է, թե՞ Եվրոպա: Գուցե Ուստասանի արքանյա՞կ է, կամ Իրաստոնեության սահմանադրա ամրո՞ց, որը դիմի խլամի հարևանությամբ գտնի գոյաւանան իր ուրույն ծկը: Գուցե Հայաստանին բնորոշ են բոլո՞ր վերնույալ հաևկանիսները, գուցե նաև դրանցից ոչ մեկը: Արդյո՞ք սա բացառիկ կարգավիճակ ունեցող մի ժողովուրդ է, որ դիմի իրականացնի նաև կորցրած հողերը վերադարձնելու ու նախկին փառքը և մեծությունը վերականգնելու առավելությունը: Հնաւավոր է, որ վերնույալ բոլոր փաստականների համար լուրջ կողմնակիցներ գտնվեն և սկիութահայերի, և հայաստանաբնակ հայերի մեջ: Հայերի ազգային կենսափորձն այնուա բազմազան է եղած՝ 20-րդ դարի ընթացքում հայերին վիճակված դատմական-բաղդարական խաղաքարտերի դատարով՝ ցեղաստանությունից մինչև խորհրդային կոմունիզմի 70 տարիները, որ դժվար է միասնական կարծիք կազմել Հայաստանի ինքնության վերաբերյալ:

Եթե այդ բազմազանությունը անցյալում երեմն որդես անեծք էր ընկալվում, աղա ներկայում՝ 21-րդ դարի գլոբալացված մշակույթի դայմաններում, դա արագորեն դառնում է Հայաստանի կարևորագույն արժանիքներից մեկը: Հայերն ունեն ժամանակակից աշխարհի գրեթե բոլոր խոռոշ մշակույթներում աղբելու և աշխատելու փորձ ըստ որում շատ հաճախ աննախադեռ հաջողությամբ: Այդ փորձառությունը վճռական դեր կունենա Հայաստանի համար՝ համաշխարհային ուլույան տեղ գրավելու՝ որդես Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և ԽՍԱ աշխարհի զարգացող առևտուրային միավորումների միջև մշակութային և տնտեսական համագործակցության կաղողության: Սակայն Հայաստանը դեմք է այդ ինացությունն ու փորձառությունը, նախ և առաջ, ծառայեցնի իր իսկ զարգացմանը և Սփյուռքին իր աղաքա հնարավորությունների տեսության մեջ որոշակի տեղ հատկացնի:

Անկախության առաջին տարիներից որոշ ժամանակ անց, երբ Հայաստանը սիդոված էր ճակատամարտել միաժամանակ բոլոր ուղղություններով, երկրի բաղադրական առաջնորդներն արեն հսկա Եվրոպական կողմնորոշում որդեգեցին՝ ձգտելով անդամակցել Եվրախորհրդին և ջանահարաբար ներգրավվեցին ԵԱՀԿ-ի աշխատանքների մեջ: Եվ Նախագահ Ողբեր Քոչարյանը, և Արտահին գործերի նախարար Վարդան Օսկանյանը նշել են, որ Եվրամիության անդամակցելը Հայաստանի համար բաղադրական նորատակ է: 2003 թվականի սեպ-

Տեմբերին Բուլղարիա կատարած այցի ժամանակ Նախագահ Քոչարյանը հայ-
սարաւեց, որ Հայաստանի տնտեսությունն այնքան արագ է բարելավվում, որ մինչև 2015 թվականը Հայաստանն ի զորու կլինի հավակնել Եվրամիության ան-
դամակցելու կարգավիճակին: Ընդ որում՝ դա բնավ չի նշանակում, որ Հա-
յաստանը տարեր մակարդակների հարաբերություններ չի դահղանում իր հա-
րևանների և նախկին խորհրդային եղբայրական դեռությունների հետ: Մասնա-
վորապես Ռուսաստանը տնտեսական, բաղաբական և ռազմական մեծ ազդե-
ցություն ունի Հայաստանում: Թեև Ռուսաստանի՝ որդես նախկին տնտեսական
հզորությունը կորցրած տերության ներկայիս վիճակի դաշտառով Հայաստանը չի
կարողանում դիմադրել Եվրոպայի գրողական ուժին:

Այլ դաշտառներ էլ կան Հայաստանի Եվրոպական կողմնորոշման համար: Որդես ինքնություն՝ Եվրոպան բաղաբակիրթ համագոյակցման կատարյալ օրինակ
է հանդիսանում: Դամագոյակցման միջույք, որտեղ գերակայում է օրենի ուժը,
հարգվում անհատի ազատությունը, իսկ բաղաբական և տնտեսական ազատութ-
յունները կոչված են ծառայելու կայուն և բարգավաճող ժողովրդավարություն-
ներին: Հայաստանի համար, որը 70-ամյա ամրողահրության և դրան նախոր-
դող ազգային ճնշման դարավոր փորձ ունի, Եվրոպան գոյության օրինակելի
մոդել է, ընդ որում՝ այնուհետև, որը Հայաստանը կցանկանա որդեգրել, առավել
ևս այժմ, եթե, վերջապես, երկրի բաղաբացիներն ազատ ընտրության հնարավո-
րություն ունեն: Կարևոր երկների օրինակներին նետած մի հայացն իսկ բավա-
կան է, որդեսօփ երկրի բաղաբացիները վերջնականացնեն համոզվեն տարա-
ծաշրջանի սահմաններից դուրս ոգեմնչման հնարավորություն փնտենու ընտրութ-
յան ճշության մեջ: Վրաստանի բաղաբական անկայունությունը շարունակաբար
ստարում է վերածվել կործանարար ճճնաժմի: Ալրեժանը Հայաստանի հետ
կասեցված դատերազմական կարգավիճակում է, և նրա բաղաբական մօակույթն
իշել է մինչև բացարձակ ընտանելաւորության մակարդակի: Թուրքիայի հետ հա-
րաբերությունները մնում են դատմական թշնամանի սարեցված վիճակում, իսկ
Իրանը՝ որդես իսլամական թեոկրատիա, ազգային անհամաձայնության և այ-
լի կոծումների նախանառներ է ցույց տալիս:

Փորձեր են արվում ազգերի տարածաշրջանային միություններ ստեղծելու ուղ-
ղությամբ, սակայն դրանցից յուրաքանչյուրը բախվում է բարդությունների: Սևովյան Տնտեսական Միության անդամ երկները կարծես թե միայն աշխար-
հագրական ընդհանություններ ունեն, իսկ Հայաստանի դեմքում նույնիսկ դա
էլ վիճակելի է: Թեև ողջունելի է տարածաշրջանում համագործակցությունն
առաջ մղող ցանկացած նախաձեռնություն, սակայն տնտեսական ինտերման
ակնհայտ հիմքեր չկան, և ինտերման ծանաղարին առկա են նշանակալի որոշ
խոչընդունելու: Այդ կազմակերպությունում Թուրքիայի գերիշխող բաղաբական
դիրք նույնության համար է առաջացնում Հայաստանի համար: Դրանից
բացի, նաև առնելով Եվրամիության անդամակցելու Թուրքիայի համար մտա-
դրությունը, դեռևս անդամական են մնում Սևովյան խմբի զարգացման գոր-
ծում Թուրքիայի աշխագրովածության իրական ասիժանի հետ կաղված մի
շարժ հարցեր, ինչը բացարձակ առաջնային խնդիր է նրա տնտեսական և
բաղաբական օրակարգություն:

Հայաստանի համար ավելի բնական է միանալ Անկախ Պետությունների
Համագործակցության երկներին, եթե հաշվի առնենք խորհրդային Միության
դատմական արձագանները: ԱՊՀ խուռագույն անդամներ՝ Ռուսաստանը,
Բելառուսը, Ղազախստանը և Ռուսական, վերջերս համաձայնության եկան

նախային միություն կազմելու շուրջ, ինչից ենելով՝ Ուկրաինան հայտարարեց, որ ինքն այլև չի ձգտ անդամակցել Եվրամիությանը: Սակայն այդ միության սնտեսական իրողությունը շատ դժգույն է՝ Եվրամիության ներկայիս ուժի հետ համեմատած, և այսօր շատ ինչ փաստական կան հօգուտ այն տեսակետի, որ կարուաբաղությունը կարող է զարգացման ժիշտ ընտրության հիմք դառնալ: Սուրեն բնարկված ուսուհայկական հարաբերություններից բացի, չկա որևէ այլ նախանձան, որ ԱՊՀ երկների համար Հայաստանի հետ սնտեսական ինտեգրումը կարևոր է:

Նույնիսկ եթե ենթադրենք, որ բաղադրական դժվարությունները կիաղթահարվեն, հարավ-կովկասյան տարածաշրջանի ներուժը, ներառյալ՝ համագործակցությունը Ադրբեյջանի և Վրաստանի հետ, շատ սահմանափակ սնտեսական հնարավորություններ է առաջարում՝ ընդամենը 15 միլիոն մարդ ստասարկող ուսուվայով և 10 միլիարդ ընդհանուր համախառն ներին արտադրամնով, ինչը հավասար է միայն Շուլանդիայի ԴՆԱ-ի ընդամենը 3 տոկոսին, ընդ որում՝ վերջինն Եվրամիության ամենափոփոք սնտեսություններից մեկն է: (Աղյուրը՝ ՄԱԿ-ի Զարգացման գրասենյակի Հայեցակարգային փաստաթուրը՝ Հայաստանի կայուն սնտեսական զարգացման բաղադրականության մասին):

Հայաստանի համար բաց և հանդուրժող ժողովրդավարության զարգացումը առաջնային և ավելի մեծ հնարավորությունների առթյունը է, ինչի ընորիկվ երկիրը հոյսի փառս կիառնա լառական լառական տարածաշրջանում, ինչը կօգնի մեծ տերությունների կողմից կարևորելու երկր հերթ հարևան երկների միջև կայունության դահդանան ներուժ առաջարկելով: Դրա համար Հայաստանին դեմք է կողմնորոշվել դեռի Եվրոպա, որի օսկերը տարածաշրջանային ժողովրդավարություն և կայունություն դահդանան գործուն համբեկում են Հայաստանի օսկերի հետ, հաւաքաղեա նաև այն դաշճառով, որ մի օր Կովկասը սահմանակցելու է Եվրամիությանը:

Ֆինն դիվանագետ Յեյֆի Թալվեթին Եվրամիության հատուկ հանձնակատար նշանակվեց Հարավային Կովկասի դեսություններում՝ Վրաստանում, Հայաստանում և Ադրբեյջանում: 2003 թվականի հուլիսին Եւսան կատարած իր առաջին այցի ժամանակ դարն Թալվեթին այսդես բնութագրեց իր դերը. «... Պիտի փորձեան սահմանել տարածաշրջանում Եվրամիության օսկագրգովածությունը»: Եվրամիության դեկավարությանը հղված նրա գեկուցագիրը դեմք է լույս ընծայվել մինչև 2003 թվականի վերջը:

Եթե ժամանակակից հաշվենկատ տեսակետները նայում են դեռի Եվրոպա տանող ճանադարին, նույնը կարելի է ասել նաև Հայաստանի դաշճառական արմամետի մասին: Հայեր կարող են խոսել Եվրոպայի հետ դարերի խորք զնացող ժառանգական կատերի մասին ժիշտ այնդես, ինչդես իին Արենիկից և Շոռմից սերող ժամանակակից հոյսներն ու իսալացիները: Բյուզանդական ժամանակներից մինչև Անգլիայի խաչակրաց արշավանքները, Վենետիկի դուստերից մինչև Օսմանյան Թուրքիայի սուլթանները Հայաստանը և հայերը սեր կատեր են ունեցել Եվրոպայի հետ՝ մասնակցելով նրա դաշճության նշանակալի օջադարձերին և որոշակի դեմք են թողել յուրաքանչյուր խոռոր դաշճառական ժամանակաշրջանում: Հայաստան՝ աշխարհում առաջին Իրիսոնեական ազգի կարգավիճակով, անվերադահորն կիսում է Եվրոպայում օրենսդրության, փիլիսոփայության, արվեստի և ճարտարադիտության զարգացման երրայա-Իրիսոնեական ավանդույթները:

Կատիկանի արիստում ակնառու փաստակներ կան, որոնք վկայում են

Հոռմի և Էջմիածնի կրոնական առաջնորդների միջև դարավոր հարաբերությունների մասին: Յայոց լեզուն, ինչողես և անգլերենը, դասկանում է հնդեվրոպական լեզվաճնահիմնի: Արևմտյան Եվրոպայից Յայաստան եկող այցելուներն այսօր անմիջապես նկատում են Յայաստանի հետ մշակութային նույնությունը, որը թափանցում է բոլոր աշխարհագրական սահմաններից անդին, և բնավ ակնհայտ չէ, օրինակ, հարևան Աղրեջան կատարած այցելության ժամանակ: Յայերը միանալու կերպարական և արևմտյան մշակույթներին բնորու բացություն և հանդուժմողականություն են դրսնորում բազմակարգային «աղբի՛ և ուրիշներին թող աղբե՛» մուտքումով, բեն նույնիսկ Յայաստանի բնակչությունը զարմանալիորեն համաստ է: Ուժեղ են ոչ միայն Յայաստանը Եվրոպայի հետ կաղող մշակութային և փիլիսոփայական արմաները, դակաս հզր չեն նաև ազգակցական կապերը: Միիթրայան միաբանության ներկայությունը Վենետիկում հայտնի է շատ վաղուց, իսկ Գյուլբենկյան հիմնադրամը կարելի է ասել Պորտուգալիայի ամենահանրահայտ մշակութային հաստատությունն է: Յայերը Բելգիայում Անվերտենի աղամանոյի շուկայում ամենածանաչված առևտականներից են, իսկ ֆրանսահայ համայնքն ավելի բան կես նիլին մարդ է ընդգրկում: Յայերն ու հույները վաղեմի բարեկամական ավանդներ ունեն, որոնք կառուցվել են ընդհանուր դատնության և կրոնական դավանանքի հիմերի վրա, և մինչև օրս համատեղ խաղաղ աղբում են Կիդրոսում: Յայաստանի Յանրատեսության խաղաղիները կարող են նմանօրինակ սեր կապեր մատնանել նաև Թուրքիայում, Վրաստանում, Իրանում և Ռուսաստանում, հայկացնեն Կրասնոդարի օրջանում և Սոսկվայում բնակվող հայ համայնքների հետ: Սակայն միայն Եվրոպան է միաժամանակ առաջարկում դատմական կապերի, ժողովրդավարական կայունության ու սնտեսական հզորության համակցություն: Սուակութային բազմակարգության կենտրոնական դերը Եվրախորհրդի և Եվրամիության նախագծերում խորականության և հետաղնորումների դեմ այնորիս երաշխիներ է աղահովում, որդիսին չեն վայելում ազգային փորձամասնությունները ոչ մեկ այլ օրինակում: Բազմակարգության հարցը կարող է: Ժամանակակից Յայաստանը փոքր երկիր է, որի ժողովուրդը սիմված է եղել դարերի ընթացքում անդադար ճակատամարտել սարքեր զավթիների մակրնացությունների դեմ՝ իր երնիկ և մշակութային ինքնությունը դահլյանելու համար: Եթե Եվրամիությունը մշակութային միաձուլման մի այնորիս սարքերակ առաջարկեր, որից իր դիմի սերվի «նոր Եվրոպացու» կերպարը, ինչը կարող է շատ նման հնչել նախկին «խորհրդային մարդու» կերպարի հայեցակետին, աղա, ամենայն հավանականությամբ, ոչ մի խաղական կամ սնտեսական փաստարկ չի կարողանա համոզել Յայաստանին միանալ նման խմբավորման: Յայերը այնքան երկար ժամանակ և այնորիս վճռականությամբ են կառչած եղել իրենց «հայությունից», որ ոչինչ չի կարողանա համոզել նրանց որևէ առավելություն տեսնել իրենց ազգային ինքնությունից հրաժարվելու մեջ: Սակայն Եվրոպան ըստ երթյան ազգային ինքնության դաշտանության և նույնիսկ դրա վերականգնման իրական ջատագովն է, ինչը կարող են վկայել կատարելացիները, որևէ առավելություն տեսնել իրենց ազգային ինքնությունից պատճենագիրը և ֆլամանդացիները: Որևէ ազգի թույլ չտալով բարակական ու սնտեսական գերիշխանություն ծերել բերել և միևնույն ժամանակ խրախուսելով իշխանության փոխանցումը տարածության այսդես կոչված «սուլուսիդարության» կամ «համալրողականության» ընթացքի միջոցով՝ Եվրամիությունը ավելի փոքր ազգերին հնարավորություն է ընձեռում դահլյանել իրենց մշակութային ինքնությունը և բարգավաճել, հայկացնել ի հեճուկս

ազգային փոթրամասնությունների նկատմամբ մշակութային, բաղախական և սնտեսական խորականության դեմ իրավական մտահղողության նկատելի ամկման: Որքան էլ տարօրինակ հնչի, բայց մայրցամաքի ամենահզոր սնտեսական-խաղաֆական միավորումը միևնույն ժամանակ նաև ամենաթույլ և ամենախոցելի նշակութային հներությունների գոյատևման երաշխավորն է:

Այս հանգամաններում դժվար չէ տեսնել, թե ինչու է Հայաստանի դեկավարությունը հաստակամորեն ընտել դեռի Եվրոպա ճանապարհը: Դեռի արևելք տանող ուղին՝ Կաստից ծովից դեռի Կենտրոնական Ասիա, աշխարհագրականորեն և սնտեսալիքն միւս փակված է եղել Ադրբեյջանի կողմից՝ ոչ միայն Լեռնային Պարաբաղի հականարտության դաշտառով, այլ նաև նշակութային տեսակետից: Միջին Ասիայի բոլոր դետուրյունները զարգացել են մեկ ավտորիտատային հիմնարման և անձի դաշտամունքի առավել ծայրահեղական դրսուրման շուրջ կառուցված կառավարման մողելներ: Ինչուս և Հայավային Կովկասի որոշ մասերում, այդ դետուրյուններից մի բանիսը անկայուն հներություններ են՝ դաշտական մերին բաղաֆական և կրոնական հակասություններով: Հայաստանը ոչ մի ակնհայտ մշակութային կատ կամ բաղաֆական առավելություն չունի դեռի այդ տարածաշրջանը կողմնորոշվելու համար: Դեռի հարավ՝ Իրան, և դեռի հյուսիս՝ Ռուսաստան, ուղիները կարևոր են Հայաստանի առևտային կամերի զարգացման համար, սակայն, բացի արդեն եղածներից, ոչ մի բաղաֆական առավելություն չեն առաջարկում:

Իրանի հետ երկկողմանի հարաբերությունները բարենպաստ են և կենսականորեն կարևոր են եղել Հայաստանի համար՝ վերջինիս օգնելով հաղթահարել Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից իրականացված առևտային շրջափակումը: Սակայն կողմերից և ոչ մեկը չի ակնկալում ավելին ստանալ, բայց ինսարավոր է անկախ դետուրյունների միջև փոխադարձ օտակառությունը երկկողմանի հարաբերություններից: Չկա որոշակի բնագավառներում կորորդինացված գործողություններ նախաձեռնելու կամ միասնական դետականության նոյանակահարմարություն: Իսկապես, հաօվի առնելով Իրանի և Միացյալ Նահանգների միջև սառը հարաբերությունները և Հայաստանի շարունակական կախվածությունը ԱՍՍՀ ֆինանսական օգնությունից, հնարավոր է, որ Հայաստանի համար իր հարավային հարևանի հետ ավելի սեր հարաբերություններ զարգացնելը հակադարձ հետևանքներ ունենա:

Բավականին տարեր է ուղին դեռի հյուսիս: Ռուսաստանը հետզիետե ավելի կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի սնտեսության մեջ, մասնավորապես՝ եներգետիկայի բնագավառում, ինչը դարձավ 2002 թվականին Երևանի և Մոսկվայի միջև կնքված «գոյց դարսի դիմաց» համաձայնության արդյունքը: Անշուշտու, սա ուժիղացնում է Հայաստանի մերին գործերի մեջ Ռուսաստանի բաղաֆական ազդեցության հնարավորությունը, ինչը ողջունելի է բնակչության մի նշանակալի մասի համար և կասկածամութեն է ընդունվում մյուս՝ գերեք ոչ դակաս նշանակալի մասի կողմից: Ռուսաստանը դաշնականորեն տարածաշրջանում գաղութահրոց դեր է խաղացել, թեև Ռուսաստանի մերկայությունը անվանգության երաշխիք է ծառայել Հայաստանի համար թուրքական հաշվեհարդարի ստանալիքի դեմ: Հայաստանում ռուսական խուռ ռազմական հենակետի մերկայությունը, բոլոր մակարդակներում լայնածավալ համագործակցության ցանցի հետ մեկտեղ, շարունակում է աղահովության երաշխիքներ տալ հյուրերին: Սակայն ուժային հարաբերությունները երկրների միջև այնքան անհավասար են, որ հարաբերությունների առավել խորացումը Հայաստանին

դնում է կախյալ ղետություն դառնալու վտանգի առաջ, ինչը նշանակում է, որ Վեցինս դիմի համարատավանաբար զոհաբերի իր անկախությունը անվտանգության երաշխիների փոխարեն:

Դայաստանում ոճանք սա դիտում են որդես ընդունելի գործարք՝ համոզված լինելով, որ Դայաստանը նճան թշնամական և անկանխատեսելի միջավայրում երեք չի կարողանա ինքնուրույն ծերել բերել զոյատնան երաշխիներ: Սակայն Մոսկվայի ու Երևանի միջև խորհրդային ժամանակներից ի վեր զոյություն ունեցող հարաբերությունները նույնությամբ, թեև արդեն ավելի ժամանակակից լուսական ներքությունների մեջ պահպան է անկախության համար և հավատում են Դայաստանի անկախ աղաքային: Այսուհետվ՝ սեփական ճակատագրի տերը լինելու մեջ Դայաստանի ազատությունը կախված է այս սահմանափակումներից, որոնք երկիրը դատարան կիմի կիրառել Ուստասանի հետ իր հարաբերությունների մկանմամբ: Պատմությունը և ընդիհանուր արտահին կերպար կարող են օւր բարեկամական հարաբերությունների հանգեցնել: Դրա ակնառու օրինակն են Բրիտանիայի և Միացյալ Նահանգների, կամ թեկուզ Ֆրանսիայի ու Դայաստանի միջև եղած հարաբերությունները: Սակայն հարաբերությունների ցանկացած դաշտունական հանգուցունը անխոսափելիորեն հանգեցնում է հաճագործակցող առավել խոռոշ չափերի գերակայությանը: Դայաստանն արդեն իսկ աղեցության օւր իշխանությունը ունի, և աղաքայուն Ուստասանի տնտեսական անկախության հզորացմանը գորգընթաց նոյնիսկ ավելի իշխ կունենա: Դնարավորությունների հեռանկարը օւր ավելի մեծ է Եվրոպայում: Դայաստանը իրեն գնահատում է Եվրոպական չափանիշներով, որովհետև ինքն իրեն տեսնում է որդես Եվրոպա, ինչը տարբերակում է Դայաստանին դեղի արևելյ ընկած բոլոր նախկին խորհրդային դաշնակիցներից, որոնք հստակորեն ասիական ինքնուրույն ունեն: Ամինար է նճան Եվրակացություն չանել նոյնիսկ այն դեղին, երբ բանից բննադատված 2003 թվականի ընտրություններից հետո Նախագահ Ռոբերտ Քոչարյանի վարչակարգի առաջատար մի բանի անձինք փորձում են տարբերակում նշցնել Եվրոպական և հայկական մտածելակերպերի միջև: Սասնավորադես այս հավատումը, որն արվեց ի դատախան ընտրական ընթացքի ձախողման վերաբերյալ ԵԱՀԿ և Եվրախորհրդի բննադատության, ընդունում էր այն հանգամանքը, որ Դայաստանը դեռ օւր է գտնվում բաղաբակիրք Եվրոպական դեսություն լինելու բաղձակի նշանակետից, թեև բացեիրաց չի մերժում Եվրոպական մտածելակերպի և վարչեցողության նորմերը: Իսկառես, Դայաստանի բաղաբական մշակույթի ամենազարմանալի համականիշներից մեկն այն համընդիհանուր միակարծությունն է, որն արդեն առկա է Եվրոպական կողմնորոշման կաղակցությամբ, մինչդեռ նճան միակարծություն դեռևս ծերել չի բերվել գրեթե ոչ մի ուրիշ հարցի ժողովում:

Ոչ մի լուրջ բաղաբական կուսակցություն կամ դատախանդիր ունենական կարձամակետ առավելություն չի տեսնում այս միակարծությունը մերժելու և ազգային մեկուսացման բաղաբականության, ինչը նաև Ուստասանի հետ ավելի սեր հարաբերությունների օգտին բանավիճելու մեջ: 2003 թվականի խորհրդանական ընտրությունների ժամանակ կողմնորոշման կուսակցությունը, որը բանավիճում էր Ուստասանի և Բելառուսի հետ բաղաբական միջության մեջ մասնակի օգտին, Դայաստանի անկախությունից հետո առաջին անգամ ոչ մի տեղ չըքաղեցրեց խորհրդանալում: Այս հանգամանքը չանտեսվեց նյութ բաղաբական կուսակցությունների կողմից, որոնք բոլորը հստակորեն հայտարարել

Եին Եվրոպայի հետ ավելի սեր հարաբերությունների զարգացման օգտին իրենց կողմնորոշման մասին: Սակայն կան նաև այլ սցենարներ, որոնք կարող են դարձադրվել Հայաստանին, հակառակ Վերջինիս ցանկությունների՝ նենգափոխելով կամ նույնիսկ բովանդակագրկելով Եվրոպայի հետ հարաբերությունները խորացնելու նրա ձգտումը: Ուստական տարբերակը կարելի է վերլուծել հետևյալ կերպ: Նման հանգամանմերում Հայաստանը հետզիտես ավելի կախյալ է դաշնում Մոսկվայից, խորհրդային ժամանակների լեզվով ասած «կենտրոնից», և աստիճանաբար կորցնում է ինքնուրույն բաղադրական, արտաֆին բաղադրական և սնտեսական որոշումներ կայացնելու ազատությունը, թեև անունով մնում է որդես անկախ դեռություն: Ամեկախությունը գրիարենվում է հանուն գյատևման:

Ուստասանի հետ կարդի հետագա զարգացումն առաջարկում է նաև աշխարհում ավելի ցայտուն արտացոլված կարևորություն ձեռք բերելու հեռանկարը: «Ուստասանի հետ» լինելը նշանակում է աշխարհի կողմից լուրջ ընդունվել՝ դաշնալով համաշխարհային դիվանագիտության ավելի մեծ մասի բաղադրիչը, բազմաթիվ և համեմատաբար փոքր երկրների շարում անտեսված մնալու փոխարեն: Սա որոշակի զգացմունքային ազդեցություն ունի բոլոր նրանց վրա, ովքեր կարուով են իշխում խորհրդային գերերության հին և լավ օրերը: Դրանից բացի, դա որոշակի գործնական ծանրակշռություն կարող է տալ Հայաստանին միջազգային բանակցությունների ժամանակ սակարելիս: Նրանք, ովքեր միջազգային հարաբերությունների նկատմամբ հոռետեսական, թեև, ըստ իրենց, իրատեսական կարծիք ունեն, կվիճեն, որ միայն Ուստասանը հսկա արտահայտված ռազմավարական շահ ունի Հայաստանի սահմանների անբողջականությունը դաշտային մեջ: Վրաստանը, եղուարդ Շեվարդնաձեի առաջնորդությամբ, փախավ ուստական ազդեցությունից, ինչը նրա բաղադրականության կենտրոնական նորական էր, մի ձգտում, որը նոյնիսկ ավելի էր ուժեղացել Արխագիայի շուրջ տասնամյա հակամարտության արդյունում: Աղրեջանի բաղադրական և զգացմունքային հսկա կողմնորոշումը դեռի Թուրիխա է, ինչն ուժեղացնում է Հայաստանի սեփական անաղահովության զգացումը երկու ուղղությամբ: ԱՍՍ-ը Աֆղանստանի հետ դաշտայի կաղակցությամբ ռազմավարական ներկայություն հաստատեց Կենտրոնական Ասիայում և, հասվի առնելով Բաբվում ամերիկյան նավային ընկերությունների բառատուն միջարդանոց ներդրումները, մասնաւուս շահագրգուված է աղրեջանական նավթի անխափան հոսքը դեռի արևմյան շուկաներն աղահովելու մեջ: Այդուհանդեռձ, դարձ չէ՝ արդյո՞ ԱՍՍ-ը դիտում է Հայաստանը, հատկանես 2003 թվականի նախազահական ընտրությունների լուսի ներք, որդես արժեքավոր գործոն: ԱՍՍ-ի առաջնահետք շահերից է բխում տարածաշահանում կայունության դասհանումը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիր լուծումը: Սակայն դա կարող է հակասություն ստեղծել ԱՍՍ-ի և Հայաստանի ազգային շահերի միջև, եթե Բաբվից նավթի հոսքը աղահովագրելու վահճանոնի ցանկության մնութիվ ԱՍՍ-ի բաղադրականությունը աղրեջանամետ ուղղվածություն ստանա: Թուրիխայի հետ լավ հարաբերություններ դահլանելու վաղեմի շահագրգուվածությունը ներուժի մեսակետից ավելի կարևոր է ԱՍՍ-ի համար, հատկապես՝ Իրաֆի հետ նրա հակամարտության լուսի ներք, ինչը նոյնական դաշտային կասկածների տևիքի է տալիս՝ արդյո՞ ԱՍՍ-ից մեծ կախվածություն ունենալու դեմքում իր շահերը դաշտային պահանձնական կիմենն: Շատ անհավանական է նաև, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության վերևունական ցանկացած հանգամանում ԱՍՍ-ը երբեմ գործեր տեղակայի տարածաշրջանում Հայաստանի անկա-

խությունը դաշտամելու համար:

Նոյնը չի կարելի ասել Ուսասամի մասին, որը փոխադարձ դաշտանության դաշինք է կնել Երևանի հետ և, ինչպես ավելի վաղ նույնագույն է դահում Հայաստանում: Սա լրացուցիչ նշանակություն է սանում Մոսկվայի համար հատկանի անդամական կազմում, եթե Վրաստանի կառավարությունը որոշել է հանել ռուսական գորամասերը Վրաստանի տարածքից: Ուսական սահմանադրամը գործերը դահակային ծառայություն են իրականացնում Թուրքիայի հետ Հայաստանի սահմանի վրա, և ռուսական ռազմական նյութատեխնիկական օժանդակությունն ու հետախուզությունը մեջ գործնական նշանակություն ունեցան Հայաստանի համար 1994 թվականի հակամարտության ժամանակ, ինչը հնարավորություն սկզբ բարացիորեն ազատագրել ամբողջ Լեռնային Ղարաբաղը և նոյնիսկ գրավել Աղրեջանի որոշակի մասը: Կարծ ասած՝ Ուսասամն իր ուժը ցուցադրեց այնտեղ, որտեղ ինքը որոշակի ազգային ժամանակակից է ունենալու և առաջարկելու համար, առնվազն այժմ, դրանի համընկնում են Հայաստանի ժամանակակից հետ:

Մեկ այլ հակամական, բայց շատ ավելի անդամական ադազայի հեռանկար ունի Հայաստանը ցցափակման դայմաններում և մշտական անկայունության գոտում գտնվող հարևան Երկրների հետ անդադար հակամարտության մեջ գոյատելու համար: Այս մոդելում Հայաստանի միակ բաղադրական նորագույն կյանքի գոյատելը իր սահմանների գինված դաշտամանության միջոցով՝ բոլոր սնտեսական, բաղադրական և դիվանագիտական նախաձեռնությունները ծառայեցնելով այդ խնդիրն:

Այս մոդելը ենթադրում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կմնա չլուծված, և մեկ տասնամյակ կամ ավելի երկար ընթացքում նավիք ժնորհիկ բարգավաճող Աղրեջանի սնտեսությունն ի գորու կյանի նախաձեռնել գինված հակամարտության մի նոր բռնկում, որը հագեցած կյանի տեխնիկական նոյնիսկ ավելի հզոր և արդական սղառազինությամբ, բան նախորդը՝ Հայաստանը Սփյուռի օգնությամբ, ինչորեն նաև օգտվելով Ուսասամի զգույց օժանդակությունից, սիմոված կյանի կենաց ու մահու դայքար մողել լսվ զինված աղրեջանական բանակի դեմ, ինչը ասիժճանարար կօլատի հանրադետության ամբողջ սնտեսությունը: Օսարերկրյա ներդրողները վախեցած կյեն Երկիրը, և Երևանը սիմոված կյանի անդադար ներին դայքարի մեջ լինել արտազարդի մի նոր այլի կասեցնելու համար, հատկանի գինվորական տարիի Երիտասարդ տղամարդկանց, իսկ միջազգային կազմակերպությունները կձգտեն ընդամենը սահմանափակել տարածաշրջանային անկայունության ծավալները՝ երկու կողմերին էլ հավասարացնելու դաշտամանատու դիմելով անհաւս հակամարտության համար:

Այս մոդելը ենթադրում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները ոչ միայն չեն բարեխավի, այլև ավելի կվասթարանան, ընդիւմը մինչև այն ասիժճան, եթե փակ սահմանը գերադասելի տարերակ կյանի բացահայտ հակամարտության համեմատ, ինչը հղի է Ուսասամնը ՆԱՏՕ-ի անդամ դետության հետ հակամարտության մեջ ներխածելու վանգով: Հակամարտության անդադար սղառազի կյանի նաև նախիջևամի ժուր:

Մինչ այդ Վրաստանը կընկնի բռնությունների և ներին ընդվզումների խորը ճգնաժամի մեջ, ինչը Հայաստանին կսղառնա կյուսիսային սահմանի վրա լրացուցիչ զինված հակամարտության մեջ ներխածելու վանգով՝ կաղված Ախարիալարի հայազգի բնակչության անվտանգությունը դաշտամելու անհրա-

ժեւսության հետ: Դեղի հյուսիս ընկած տարածներում՝ Չեչիայում, Հյուսիսային Օսթրիայում և Ինգրուտերիայում, կշարունակվեն թեժանալ էրնիկ և ազգային հականարտությունները, որոնք Մուլյային կտիդեն տարածացանում իշխանությունը դադարանելու համար ներփակել երկարաւուն ու ծախսաւուս դարձագանական դատերազմի մեջ: Դեղի հարավ ընկած իրանը կդառակվի ռեֆորմիստական և ֆունդամենտալիստական շարժումների միջև, որոնք կուտեկութեն իրանի հյուսիսային գավառներում ազերի բնակչության ընդվզումներով, ինչն ավելի կխորացնի անկայունությունը տարածացանում: Շատ առումներով այս սցենարը Եվրոպայի հետ միավորման հեռանկարի հակաթեզն է: Սա այն սցենարն է, եթե ավելի վաս լինել չի կարող, և Յայաստանը, միջազգային հանրության մեջ իր արժանի տեղը գրաբելու փոխարեն, հայտնվել է աշխարհից բացաձակ մեկուսացման դայմաններում: Ըստ Էլեման, Եվրոպայի հետ միանալու Յայաստանի ջաները կարելի է ընկալել որդես նման աղագայից խուսափելու անմիջական նախաձեռնություն, որը թե թե օստ հավանական է դառնում այն դեմքում, եթե հանրադեմությունը չկարողանա Կովկասից դուրս դեղի Եվրոպական ընտանիք տանող կամուրջ կառուցել: ԵԱՀԿ-ն վերահսկում է Ղարաբաղում շարունակվող զինադադարի դադարանումը և ֆինանսավորում է Մինսկի գործընթացի միջոցով խաղաղ ճանաղարհով հականարտությունը լուծելու շաները:

2001 թվականին Եվրախորհրդարանը ընդունեց և Յայաստանին, և Ալբրեցա-նին՝ չնայած դեռևս չլուծված հականարտությանը և այն փաստարկներին, որ կողմերից ոչ մեկը դեռ չի համադրասախանում անդամակցության դահանջներին՝ դրանով իսկ փորձելով որոշակի կայունությունը մնանել տարածացանում:

ՏՐԱՎԵԿԱ ծրագրի միջոցով, որի գլխավոր բարուղարությունը ներկայումս ստանձնել է Յայաստանը, Եվրախորհրդարանը ձգտում է առաջ մղել տրամսորդի և առևսերի համար ազատ սահմանների գաղափարը՝ նոյատակ ունենալով Յարավային Կովկասում ավելի սեր կայեց ստեղծել և հավասարակօրել անջատողական միտումները մի տարածացանում, որտեղ հսկայուն տարեր 28 էրնիկ խմբեր են բնակվում: Դրսից տարածացանի նկատմամբ կիրավում են ներին անարխիայի ստանալիքով շարունակաբար հիյ՝ շահեր ընդհանրացնող կենսրունածիզ ուժեր՝ ներ ազգային և էրնիկ ինմոնրունան կենսրունախույս ուժերը հավասարակօրելու նոյատակով:

Յայաստանը Եվրոպան ընտրում է ոչ միայն այն դատառով, որովհետև դա լավագույն աղագան է կամ որովհետև ինքն այլ ընտրություն չունի, այլև ընտրում է որդես վատագույն տարերակից, այսինքն՝ շրջափակումից և ավերածություններից, խուսափելու միջոց, որը չափազանց իրատեսական հեռանկար է, եթե հասվի առնենք և Յայաստանի սեփական դամական փորձը, և Կովկասյան տարածացանում տեղ գտած Եխտրհրդային զարգացումները: Տարածացանում 2020 թվականի հավանական սցենարը բառուն է, եթե միայն Յայաստանին չհաջողովի օգսել Եվրոպական հաստատությունների առաջարկած անվանգության թափարգելից: Եվրոպան ոչ միայն անվանգություն է առաջարկում, այլ նաև ինքն է անվանգություն որոնում: Բրյուսելում Եվրամիության բայլաբական գործիչների վատագույն մղջավանջն է արևելյան և հարավային սահմաններից դաշտարան ենթակայել ծախողված դետություններից արտագաղթող բնակչության կողմից: Յարևաններին կայունացնելու միջոցով Եվրամիությունը իր համար լավագույն հեռանկարն է ստեղծում՝ ինչն Միության ներսում դադարանելով

խաղաղությունը և սոցիալական ներդաշնակությունը:

«Եվրոպական հաստատություններ» եզրույթի կիրառումը հստակորեն ենթադրում է Հայաստանի համար մասչելի հարաբերությունների մի շարք ընտրություններ: Պահաժամության բնագավառում Հայաստանը հարաբերություն է հաստել ՆԱՏՕ-ի հետ՝ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով, և վերջին բավականին բարձր զնահատականի արժանացավ Հայաստանի տարածում ՆԱՏՕ-ի առաջին զորավարժանները հյուրընկայակեր համար: Հանրապետության հրապարակում կայացած օբյեկտում թուրքական զորենի երթը արտասովոր տեսարան է, ինչն այդ զորավարժանների ժամանակ առաջին անգամ կատարվող բազմաթիվ զործողություններից մեկը եղավ: Հայաստանը արդեն վայելում է ԵԱՀԿ-ի և Եվրախորհրդի անդամության առավելությունները, իրականացնում դրանցից բխող դարտավիրություններ և իր ներկայացուցչությունն ունի Եվրախորհրդի խորհրդարանական Վեհաժողովում: Հայաստանը լիովին ինտեգրվել է Եվրոպական դիվանագիտության այդ համաժողովներում՝ առանց սիմված լինելու զոհաբերելի իր անկախության որևէ մասը: Անդամության հետ մեկտեղ, այդուհանդերձ, ուժեղացել է Հայաստանում դեսական կառավարման գործնարարությունը և երկրի հասարակական կյանքի չափորոշչների նկատմամբ արտաքին ուսադրությունը, ինչը հաճախ որոշակի տաճություն է տաճառագործությունները, ինտեգրացիան ինդանություններին: Հայաստանը դարտավիրությունը է վեցրեկ ընդունելու Եվրախորհրդի անդամության կարգավիճակով դաշանաշվող բոյոր արձանագրությունները, ներառյալ՝ մահաղատժի վերացումը, հարգանքը կրոնական և բաղադրական բազմաթիվ սահմանադրությունները, ուստի կանոնական և բանային ծառայությունների բարեփոխումը, մարդու իրավունքների դաշտավայրությունը, Մարդու իրավունքների դաշտավայրության Եվրոպական դատարանում վերջնական բողոքական իրավունքի դաշտավայրությունը և ազատ ու թափանցիկ ընտրությունները:

Այս հայեցակարգերից առաջը մասակութային և բաղադրական դաշտառներով դժվար է յուրացնել մի երկրում, որը, յոթանասուն տարի կտրված լինելով ժամանակակից մատողության զարգացման հիմնական ուղղություններից, դեռևս կյանքին հարմարվելու ընթացքի մեջ է: Մահաղատժի վերացումը, հատկապես Երևանում 1999 թվականի հոկտեմբերին խորհրդարանում կատարված ահաբեկչական հարձակման ժամանակ ուր առաջատար բաղադրական գործիչների սղանության կաղապահությամբ, նշանակալի հակասական կարծիքներ է առաջացրել:

Քաղաքական վերնախավը, այնուամենայնիվ, հասկացավ, որ մահաղատժի վերացման ձախողությունը, եթե նույնիսկ դա թույլատրվի մի այդպիսի արտաքազարդումից կաղապահությանը, անդամանության կնքանակի Եվրախորհրդի անդամության դադարեցումը: Սա իսկապես առաջնային է խոսում Հայաստանում Եվրոպայի հետ ինտեգրման նորագույն բաղադրական նվիրվածության խորության մասին, բանգի Եվրախորհրդի չափորոշչները բացահայտուեն անտեսելով ու հասարակական վեմինիրության ծարավին հագուրդ տալով, ցանկացած անհեռատես բաղադրական առաջնորդ հսկայական, թեև կարճաև, ժողովրդականություն կնվազեր, ընտրողների բազմաթիվ ձայներով հանդերձ: Այդուհանդերձ, չգտնվեց մեկը, որն ընտրեր ժողովրդականություն ձեռք բերելու այս հետո ուղին, որովհետև երկրի համար դրա հեռահար գինը կարող է չափազանց բանկ լինել:

Ոչ ԵԱՀԿ-ն, ոչ Եվրախորհրդը սնիւսական ինտեգրման կազմակերպության հավակնություններ չունեն: Առաջինը, ինչը են հույսում է անվանումը, առաջին հերթին գրաղվում է մայր ցանքարում անվանգության մակարդակը բարձրացնող

և միջազգային լարումը թուլացնող միջոցներ զարգացնելով: Եվրախորհրդի կազմավորման հիմնարար սկզբունքներն առաջին հերթին հենվում են մարդու իրավունքների և հիմնական ազատությունների դաստիարակյան, օրենքի ուժի գերակայությունն առաջ մնելու երաշխավորելու վրա: Հիմնադրվելով 1949 թվականին որդես արևմտաեվրոպական տասը ազգերի դեւությունների ներկայացուցիչների միավորում՝ ներկայում նա կազմված է 45 անդամ դեւություններից, որոնք ընդգրկում են համաշխարհական շուրջ 700 միլիոն բնակչություն: Նրա գործունեության բնագավառները ծավալվում են մշակույթի, սպորտի, առողջապահության, կրթության, ԶԼՄ-ների ազատության, իրավական բարեփոխումների և բնադրականական խնդիրների շուրջ: 1997 թվականին ընդունված գործողությունների ծրագիրը սահմանեց 21-րդ դարի առաջին կեսի համար Խորհրդի հիմնական թեմաներ՝ ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, սոցիալական միասնականություն, բարագայթների անվանգություն և կրթություն՝ համուն ժողովրդավարության և մշակութային բազմազանության:

2001 թվականի հունվարի 25-ին Հայաստանի անդամակցությունը Եվրախորհրդին երկրի համար կարևոր ցրադարձ եղավ դեմի ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նորմերը տանող ճանաղարկին: Առանց այս նվաճման Եվրամիությունում Հայաստանի անդամակցության դիտարկման մասին խոս լինել չեր կարող: Համեմատաբար արագ առաջընթացը շատ համարունչ է Եվրամիության անդամակցության ժամանակացույցի հետ՝ 1996 թվականի հունվարին Հայաստանը հատուկ կյուրի կարգավիճակ ստացավ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում և երկու ամիս անց դիմեց լիիրավ անդամակցության համար, որի հաստատումը տեղի ունեցավ 2000 թվականի հունիսին:

Անդամակցությունը առանց դայմանմների չի լինում: Խորհրդի գրեթե ամենաառաջին որոշումը Հայաստանի և Ալբերտանի առնչությամբ վերաբերում էր համագործակցության ծրագրերին, որոնց առաջնային նորատակը «...անդամակցությունից հետո երկրներում ընթացող ժողովրդավարական զարգացումը վերահսկելը»: Այստիսով՝ Եվրախորհրդը մի զսանակ է, որը գործունեության բոլոր բնագավառներում դիմի առաջ մնի Հայաստանը դեմի զարգացած աշխարհի չափորոշչները, և մի լիսակ է, որը երկրին հաշվետու է դահելու բավարար առաջընթաց չուցաբերելու համար: Հայաստանում 2003 թվականի նախազահական ընտրությունները հաշվետու լինելու շատ ակնառու գործնական օրինակ եղան, եթե Եվրախորհրդի դիտողները բնադրաբար նշեցին իրենց կողմից գրանցված խախտումների փաստերը: Սա մեծ արքերություն՝ էր՝ համեմատած նախորդ՝ 1998 թվականի ընտրությունների հետ, եթե դիտողների դաշվիրակությունն արտահայտեց «կասկած չկար ընտրությունների իրավականության մեջ» կարծիքը և զնահատեց «գործընթացի հոգածար և ծիծ կազմակերպված ընթացքը»: 2003 թվականի ընտրությունների ցուցանիշներով Հայաստանը հետադիմեց ժողովրդավարական զարգացման մեջ, և բնադրաբար առավել տուր էր հնչում, որովհետև Հայաստանը կարծես դավաճանեց իր կամավոր ընդունած դարտավորություններին: Մասնակի դայմանագրերի համար Եվրախորհրդի դրույթները, այսպես կոչված «փոփոխական երկրաշափությամբ», նույնութեա սարքակմեր են առաջարկում Հայավային Կովկասի հաւաքերություններում որոշակի բարդություններ լուծելու համար: Օրինակ՝ Վրաստանի, Հայաստանի և Ալբերտանի խորհրդարանների նախազահաները 2000 թվականի մայիսին, Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լորդ Ռասել Չոնսթոնի նախաձեռնությամբ, հանդիդում ունեցան երեք խորհրդարանների համատեղ մշական

աշխատամբային խումբ հաստատելու նղատակով։ Խումբը դեմք է զբաղվեր Հարավյային Կովկասի Երկրների հանար ընդհանուր՝ մարդու իրավունքներին վերաբերող խնդիրներով։ Համատեղ ուղերձի մեջ նախագահները հայտարեցին, որ սարածառաջանում Եվրախորհրդի միջոցով միջնորդարանական համագործակցություն զարգացնելու կարողությունը «մեծապես նղատեց սարածառաջանում փոխադարձ վստահության և լավ հարաբերությունների կառուցման գործին»։

Բացի դրանից, Եվրախորհրդուրդը թույլ է տալիս փախչել տուալիտար անցյալից, Երաշխավորում է տուալիտար աղաղայից և համագործակցության ավելի մեծ հեռանկար է ստեղծում հարևան Երկրների միջև լարումը թուացնելու հանար։ Սակայն նա չի առաջարկում դեղի բարգավաճում տանող այնորին ուղի, որդիկին տալիս է սննդական ինտեգրումը։ Միայն Եվրամիությունն է ուղղորդվում նախ և առաջ սննդական նկատումներով, թեև մեծ մասամբ և հիմնականում դրան ներառում են այնորին բաղադրական որումներ, որոնք Եվրաբերում են անդամ դետուրյունների միջև հարաբերությունների, ինչդեռ նաև անհամանական և Սինության՝ որում գերիշխող իննության միջև հարաբերությունների զարգացմանը։

Եվրամիությունը աշխարհի ամենախուռակ սննդական ուղարկան է և կազմում է համաշխարհային արտահանման 19 տոկոսը և ներմուծման 18 տոկոսը՝ չհաշված 15 անդամ դետուրյունների միջև ներիմ առևտուրը։ Միության 375 միլիոն սղառողմերի թիվը կազի մինչև գրեթե 500 միլիոնի, եթե 2004 թվականին ութ թեկնածու Երկրները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից, ներառյալ՝ նաև Կիրգրուսն ու Մալթան, Եվրամիության լիիրավ անդամ դաշտան։ Այս նոր անդամները որոշակի փորձություն են ներկայացնում մինչև այժմ հարուստ Երկրների ակունք դիտվող միության համար։ Մինչդեռ այդ նոր Երկրների բնակչության հաշվին Եվրամիության բնակչությունը կազի 20 տոկոսով, նոր անդամ դետուրյունների համախառն ազգային արտադրանքը (ՀԱԱ) հավասար է Եվրամիության ներկայիս 15 անդամ դետուրյունների ՀԱԱ-ի ընդամենը մոտավորապես 6 տոկոսին։ Համադաշտասխանաբար առավելադեռ նոր անդամներից շատերի բնակչության մեկ ընչին ընկնող համախառն ներին արտադրանքը (ՀԱԱ) շատ ավելի ցածր է, քան Եվրամիության միջին ցուցանիշը և նույնիսկ ավելի ցածր է, քան եղել է նախկինում Եվրամիության ընդլայնման սարքեր փուլերում, եթե, օրինակ, Իռլանդիան, Հունաստանը, Խողանիան և Պորտուգալիան անդամակցում էին Միությանը։ Նոր անդամներից ամենախուռակ Լեհաստանի բնակչության մեկ ընչին ընկնող ՀԱԱ-ն կազմում է Եվրամիության միջին 20000 ԱԱ դոլարի 40 տոկոսը։ Լատվիան իր 2,5 միլիոն բնակչությամբ, որը չափերով ամենամոտն է Հայաստանին, ունի մեկ ընչին ընկնող այնորին ՀԱԱ, որը հավասար է ԵՄ միջինի ընդամենը 27 տոկոսին, ինչը մյուս բոլոր նոր դետուրյունների համեմատությամբ ամենացածրն է։ Սակայն դարձ է, որ աղքա լինելը իմքնին խոշընդու չէ Եվրամիության անդամակցելու համար։ Համենայն դեպք Հայաստանում բնակչության մեկ ընչին ընկնող ՀԱԱ-ն, Միջազգային արժության հիմնադրամի գնահատականի համաձայն, կազմում է 3850 ԱԱ դոլար (թեև, ըստ այլ ուսումնասիրությունների, ՀԱԱ-ն հավասար է մոտավորապես 3000 ԱԱ դոլարի)։ Այսինքն՝ Հայաստանը ՀԱԱ-ն հավասար է Լատվիայի ՀԱԱ-ի գրեթե երկու երրորդին։ Եթե Լատվիան դիտվի որպես հնարավիր նվազագույն ՀԱԱ-ով անդամակցող Երկիր, որից ցածր ցուցանիշով Երկրները չեն կարող հավակնել անդամակցությամբ, աղքա Հայաստանը կանգնած է իր ներկա ՀԱԱ-ն առաջիկա

տասնամյակի ընթացում կրկնադատվելու հիմնախնդրի առջև:

